Հաշվետվություն
2025 թվականի հունիսի 23-ից 25-ը Բելգիայի Թագավորություն (Բրյուսել) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Նանե Ղազարյան, Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ,
   Ռուզաննա Խաչատրյան, Կադաստրի կոմիտեի ղեկավարի օգնական

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Բրյուսել, հունիսի 23-ից 25-ը:

3. **Հրավիրող կողմը.**
   ՄԱԿ-ի գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման հարցերով փորձագետների Եվրոպայի տարածաշրջանային կոմիտե (UN-GGIM: Europe):

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն ՄԱԿ-ի գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման հարցերով փորձագետների Եվրոպայի տարածաշրջանային կոմիտեի (UN-GGIM: Europe) 12-րդ լիագումար նստաշրջանին:

5. **Քննարկված թեմաները.**

Միջոցառման շրջանակում քննարկվել են փորձագետների կոմիտեի ընդհանուր ծրագրի և տարածաշրջանային կոմիտեի պաշտոնական գործունեությանը վերաբերող հարցեր: Մասնավորապես անդրադարձ է կատարվել առկա գլոբալ մարտահրավերների լուծման նպատակով երկրատարածական տվյալների և ծառայությունների կիրառմանը, ներկայացվել են ազգային վիճակագրական մարմինների և ազգային քարտեզագրման, կադաստրային և հողային գրանցման մարմինների գործունեության ռազմավարական ուղղությունների և ակնկալվող ապագա միտումների վերաբերյալ շնորհանդեսներ: Անդրադարձ է կատարվել նաև Երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման հարցերով ՄԱԿ-ի փորձագետների կոմիտեի Կենտրոնների (Գլոբալ աշխարհատարածական էկոհամակարգի առաջադեմ տեխնոլոգիաների կենտրոն, Գլոբալ գեոդեզիական առաջադեմ տեխնոլոգիաների կենտրոն, Գլոբալ աշխարհատարածական գիտելիքի և նորարարության կենտրոն) գործունեությանը:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Օրակարգի «Դիմակայունություն» թեմայի շրջանակում քննարկումներ են ծավալել հետևյալ հարցերի շուրջ:

- Թվային էկոհամակարգեր
- Տեխնոլոգիական նորարարություններ (արհեստական բանականություն և այլն)
- Քաղաքականության շրջանակներ
- Ճշգրիտ տարածական տվյալներ
- Վստահելի վիճակագրական տվյալներ:

Ներկայացվել է օրակարգի «Վստահելի տվյալներ - երկրատարածական տվյալներ» թեմային առնչվող՝ «Հայաստանի ուղին դեպի Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ձևավորում» վերնագրով շնորհանդեսը:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Մասնակիցներին է ներկայացվել փորձագետների Եվրոպայի տարածաշրջանային կոմիտեի գործունեության զեկույցը, նախորդ նստաշրջանի ընթացքում թարմացված աշխատանքային ծրագրի իրականացման ընթացքը, գրանցված արդյունքները, նախանշվել են հաջորդ տարիների գործունեության ուղղությունները՝ հիմնված առկա առաջնահերթությունների վրա: Նշանակվել են կոմիտեի գործադիր մարմնի նոր անդամներ:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

9. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Նանե Ղազարյան

Ռուզաննա Խաչատրյան

30.06.2025 թ.